ՆՈՒԱԳՔ ՀԱՅԿԱԿԱՆ

784
Հ1-94

# ՆՈՒԱԳՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

## ՏԵՏՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ՈՐ ՊԻՏԻ ՊԱՐՈՒՆԱԿԷ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԵՐԲԵՄՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՄ ԱՍԻԱԿԱՆ ՆՈՒԱԳՆԵՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՔՆԱՐՈՎ ՆՈՒԱԳԵԼՈՒ ՅԱՐՄԱՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

**Ա. ՇՐՋԱՆ. ԹԻՒ 5.**

Չար մարդիկ երգ չունին.
(Շիլլէր)

Շրջանը 24 թիւ է, որ հետզհետէ պիտի հրատարակուի: 24 թիւերու բաժանորդութեան գինն է 40 ղուրուշ միայն՝ կանխիկ. մէկ թիւը 2 ղուրուշ միայն: Բաժանորդագրութեան և վաճառուելու տեղերն են՝ Գալփագճըլար պաշը Եօլ կէչէն խան թիւ 63 Երաժշտութեան դասատու Փափազեան Կարապետ Էֆէնտիի անունը, Չագմագճըլար եօգուշու թիւ 20 Յ. Գավաֆեանի և Եէնի ճամի Չիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Գ. Կոտեանի գրատունները և ուրիշ Հայ գրավաճառաց քով, և Միւհիւրտար խանը թիւ 47 Ե. Մ. Տնտեսեան տպարանը, ուր տեղ պէտք է ուղղել հրատարակութեանս վերաբերեալ ամեն գրութիւն, և ուր ձայնական երաժշտութեան դասեր ալ պիտի աւանդուին խնդրողաց:

(Ազգային երաժիշտներէն և գրագէտներէն ով որ երգ ու եղանակ գրէ՝ պիտի ընդունուի և ըստ յարմարութեան պիտի հրատարակուի հեղինակին անուամբը:)

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Տաղ ի Ռոստամ բէկ.
Ակոսի խորհուրդը.



Կ. ՊՈԼԻՍ
1880

ՏՊԱԳՐ. Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ



2013
Е-2008
31822
Е--2002
784.3
Ն-94
(5009)

# ՏԱՂ Ի ՌՈՍՏՈՄ ԲԵԿ

ՉԱՓԱՒՈՐ (Moderato.) — Եղանակ Մոծարթի



Պարսկաստանի Հայերը մինչև հիմայ այս երգը սէզանի վրայ երգել կու տան կ'ըսէ Կովկաս լրագիրը 1847.

953-2008

# ԱԿՈՒՌԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՉՈՒԱՐԹՈՒՆ (Alegretto.) — Եղանակ Գերմանական.



( Տեսլիս նշանակներուն խօսքերը․ )

## ՏԱՂ Ի ՌՈՍՏՈՄ-ԲԷԿ

Մունետիկըն 'ի ձայն բարձր աղաղակէ,
Ժանտ զաւիճըն սուր 'ի ձեռին անյագ որբէ,
Վաղեր հանգոյն գիլ կենաց թել կտրել խնդրէ,
Ի կախաղան կամ 'ի բոցանդ, ո՞ւր գիս տանէ․
Քաղաքս համայն մահճեռակեան զի՞ խուռըն գան,
Զիս մահ սըզան,
Դառնագին լան գիս Ապովեան քաջ․ախոյեան։

Մի՞թէ չէք ոք աստ Քրիստոնեայ, գիս փրկեսցէ
Ցայս ամէհի և մահագոյժ վայրագ դահճէ,
Ընդէ՞ր զանմեղ արիւն թափել յերկիր ցանկայ․
Դու իրական վենման իմոյ լերո՛ւք վկայ․
Սէր հայրենեաց 'ի թըշնամեաց ձեռն գիս մատնեաց,—
Ուրախ մեռայց
Ես զառեցայց ընդ գիւցազանց իմոց նախնեաց։

Փըլըանք մնացեալք իմ սիրելի Հայոց ազգի,
Որք զըտանիք 'ի ձեռս Պարսից յայս քաղաքի,
Մի՛ մոռասջիք պատմել և զայս յորդւոց յորդի,
Թէ քաջն Ռոստոմ վասն հայրենեաց 'ի սպանդ վարի․
Թէպէտ ցաւիմ զի չմեռանիմ 'ի մարտ ընդդէմ
Թըշնամեաց իմ,
Այլ յօժար եմ, զի զոհ լինիմ այսպէս վըսեմ։

Այս քաջ բաղուկք յարեաց Պարսից հոսկայս հըզօրս
Տապաստ արկին 'ի բազում նուագս հարիւրաւորս․
Աւա՜ղ, կընատ անգութ դահճի եղէ ես որս․
Պատմեսջիք զայս՝ վե՛ն գիւցազին պատանւոյ հօրս․
«Քաջ նահատակ որդիդ միակ 'ի ձեռս վայրագ
Արանց չանկ,
Իւր յաղթանակ՝ մահ զըժընդակ կառ պըսակ։»

Մեծդ յՈրեաց արքայորդիդ Աբբաս—Միրզա,
Սուր 'ի ձեռին դահճըդ հէգ ասընթեր կայ,
Զիս թըշնամիս քոյոյ ազգի պատրաստ 'ի մահ,
Զի՞րդ կամիս բազմանանել՝ չուստ հրամայես՛։
Միայն սըգամ զի կապեալ կամ․ թէ միասնգամ
Ի ձեռս ունիմ
Հրացան սուր իմ, ձեզ ցուցանեմ ըզքաջուկ իմ։

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

## ԱԿՈՌԻԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ակոռին մեծ կարասին
Բոլորակըն են բազմեր․ (կրկ․)
Աւագ իշխանք մեծ պարոնայք
Ժողվեր են հոն կազմեր․
Այո՛, այո՛, ժողվեր են հոն կազմեր։ (կրկ․)

Սատրիկ է վէմ մեծ է խընդիր
Զոր հոն տեղ կը խորհին,
Թէ ինչ կերպով դարման մ'ընեն
Հիւանդ մեր աշխարհին․
Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին։

Մէկն այս կ'ըսէ, մէկն այն կ'ըսէ,
Կը ծագի լոյսն առտուն․
Ինձ լսեցէք, Տեարք․ կը գոչէ
Աւանին պետն արթուն․
Այո՛, այո՛, աւանին պետն արթուն։

Թող Թագ առնու, կ'ըսէ, Բագոս,
Եւ փառօք ապրի շատ,
Իսկ ցընծութիւնն ըլլայ դըշխոյ,
Եւ զահն ալ Արարատ,
Այո՛, այո՛, և զահն ալ Արարատ։

Այսպէս մեզի նոր լուսաւորութեան
Արեւներ կը ծագին․
Ուրախ ըլլայ մեր ժամանակ
Եւ փառք մեր աշխարհին․
Այո՛, այո՛, և փառք մեր աշխարհին։

Հ․ Ն․ Վ․ ԶԱԳԸՃԵԱՆ

---

Վրաց վերջին իշխան Հերակլի ժամանակ Պարսից թագաւոր Աղա Մահմադ խանի Ղարապաղի երկիրն ու Թիֆլիզ քաղաքը աւերելէն ղետ, Ղարապաղու իշխաններէն (մելիք) շատ…ը Վրաստան եկան Հերակլի հրաւիրանօք, որոնցմէ էր կիւլըստանու մելիք Մելիք—Բէկլարեանց քաջն Մելիք Աբով, սորա որդին էր Ռոստոմ Բէգ։ 1804ին Պարսից և Ռուսաց պատերազմին ատենը Ռոստոմ Բէգ շատ քաջութիւններ ըրաւ, բայց անգամ մը վիրաւորելէ յետոյ երբ յուսահատարար կը կռուէր, իւր երկու ընկերովը գերի ընկաւ Պարսից ձեռքը և ապարաւետ արքայորդի Աբբաս Միրզայի հրամանաւ (որ առելութիւն ունէր Հայոց դէմ, քանզի անոնք իւր հօրեղբօր զօրքերը ջարդեր էին Երեւանու անտառներուն մէջ), չըթայակապ Դաւրէժ գրկուելով բանտ դրուեցաւ, ուր ըստ սովորութեան ժամանակին՝ կրօնափոխ լինելու համար եղած ամեն հրապուրանաց ու խոստմանց հանդուրժեց։ Երբ Արքայորդին պարտութեամբ դարձաւ պատերազմէն, հրամայեց որ իրեն ներկայացընեն զՌոստոմ Բէգ․ նա ալ վերոգրեալ ոտանաւորը, որ իրեն բանտակից Դանիէլ կաթողիկոսի գրածը կը համարուի, հայերէն գրով առաւ արքայորդւոյն, որ երբ կարդաց թարգմանութիւնը, բարկացաւ՝ վերստին հրամայեց զանի բանտարկել, ուր տեղ շատ նեղութիւններ կրելէ ղետ, ինքնակամ անօթի մնալով փախճանեցաւ յերկնաւարդ հաւատքի բանտին մէջ։ Հայք առոր մարմինը խնդրեցին ու թաղեցին քաղաքին եկեղեցւոյն դրան առջև, և ցարդ կը գերեզմանը կեցած է հետևեալ տապանագրով․ «Այս է տապան Ռոստոմ Բէգի որդւոյ Մելիք Աբովի»։ Իսկ Ռոստոմի երկու ընկերները գլխատուեցան։ (Ընդարձակ ծանօթ․-Բէգ- տես 'ի Բազմավէպ օրագիր 1847։)